

ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՓՈԽԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Հայկ Սարգսյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ
ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ*

Քրեական դատավարությունում դատարանի կողմից մեղադրյալին վերագրվող առարքի իրավաբանական որակումը փոխելու լիազորությունն իրագործվում է ոչ միայն առաջին ատյանի դատարանում, այլ նաև դատական ակտի վերանայման ընթացքում վերաքննիչ դատարանում: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) սահմանված առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրանքը փոխելու մոդելն ուսումնասիրելուց զատ, անհրաժեշտ է առանձին քննարկել Նախագծով վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալին վերագրվող արարքը խստացման և մեղմացման առումով վերաորակելու հիմնախնդիրը՝ փորձելով վերլուծել Նախագծով սահմանված կարգավորումները և վեր հանել դրանց դրական ու բացասական կողմերը:

Նախագիծը պահպանել է գործող օրենսգրքով սահմանված «սահմանափակ վերաքննության» մոդելը, որի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է բացառապես վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Սակայն, քանի որ նշված մոդելի պարագայում հաճախ անտեսվում է դատական սխալների ուղղման հանրային շահը, և անհամաչափորեն գերակայում է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքից բխող՝ կողմերի իրենց իրավունքների պաշտպանության համար պատշաճ ջանասիրություն դրսևորելու շահը¹, Նախագիծը փորձ է արել սահմանափակ վերաքննության պայմաններում որոշ առումով հավասարակշռել հանրային և մասնավոր շահերը:

Նման կարգավորմամբ Նախագիծը վերաքննիչ դատարանին օժտել է օրենքով հստակ սահմանված հիմքերի առկայության դեպքում դուրս գալ վերաքննիչ բողոքի սահմաններից: Այսպես, Նախագծի 361-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասության համաձայն՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատարանն իրավասու է ի շահ մեղադրյալի դուրս գալ բողոքի սահմաններից, եթե բողոքը բավարարում է սույն հոդվածով նախատեսված պահանջները: Համաձայն Նախագծի 372-րդ հոդվածի 1-ին մասի՝

«Վերաքննիչ դատարանն իրավասու է ի շահ մեղադրյալի դուրս գալ վերաքննիչ բողոքի սահմաններից, եթե՝

- 1) հայտնաբերվում է քրեական հետապնդումը բացառող հանգամանք, հայտնաբերվում է, որ մեղադրյալի արարքին տրվել է սխալ իրավական գնահատական.
- 2) հայտնաբերվում են սույն օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հանգամանքներ.
- 3) հայտնաբերվում է, որ մեղադրյալի նկատմամբ նշանակվել է նրան վերագրվող հանցագործության համար օրենքով չնախատեսված պատժատեսակ, պատժաչափ,

¹ Տե՛ս Ռ. Մելիքյան, Տ. Սուջյան, Դատական ակտերի վերանայման հիմնահարցերի կանոնակարգումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնադիրների ժողովածու...Եր., էջ 407-րդ:

կամ նրա նկատմամբ նշանակված պատիժը սխալ է հաշվարկվել.

4) բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքն ակնհայտորեն վերաբերում է նաև դատական ակտը չբողոքարկած մեղադրյալին»:

Այսպիսով, Նախագիծը սահմանել է վերաքննիչ դատարանի իրավասությունը՝ սեփական նախաձեռնությամբ դուրս գալ վերաքննիչ բողոքի սահմաններից և փոխել մեղադրյալի արարքին տրված սխալ իրավական գնահատականը, եթե դա կատարվում է ի շահ մեղադրյալի: Հետևաբար, վերաքննիչ դատարանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ փոխել մեղադրանքի իրավաբանական գնահատականը, եթե նրա կողմից տրվող իրավական գնահատականը, ի համեմատ առաջին ատյանի դատավճռով մեղադրյալի արարքին տրված գնահատականի, ավելի մեղմ է:

Եթե վերաքննիչ դատարանը պարզում է, որ մեղադրյալի արարքի իրավական գնահատականը սխալ է խիստ լինելու հիմքով, նա պարտավոր է փոխել առաջին ատյանի դատավճռում տրված իրավական գնահատականը՝ անկախ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

Նախագծում նշակված լուծումը համահունչ է Հ. Մարտիրոսյանի վերաբերյալ գործով վերանայման սահմանների խնդրի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմանը¹:

Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալին վերագրվող արարքն ավելի խիստով փոխելու հնարավորությանը, ապա նշենք, որ վերաքննիչ դատարանը նման իրավասությունից կարող է օգտվել միայն այն դեպքում, երբ այդ հիմքով և պահանջով բողոք է բերել դատախազը, տուժողը կամ նրա ներկայացուցիչը:

Այսպես, հնարավոր է իրավիճակ, որ դատական քննության ընթացքում դատախազի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավաբանական գնահատականով պաշտպանվող մեղադրանքը դատարանի կողմից փոխվի և վերաորակվի անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցմամբ կատարված սպանությամբ: Նշված դատական ակտը դատախազի կամ տուժողի ներկայացուցչի կողմից խստացման պահանջով բողոքակելիս (ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելու) վերաքննիչ դատարանն իրավասու չէ անձին դատապարտել ավելի խիստ իրավաբանական գնահատականով (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որակյալ հանգամանք):

Այսպիսով, փաստական հանգամանքների նկատմամբ նյութական նորմը սեփական հայեցողությամբ կիրառելու վերաբերյալ դատարանի լիազորությունը, ըստ որի առաջին ատյանի դատարանը կաշկանդված չէր գործի փաստական հանգամանքներին տրված իրավական գնահատականով, վերաքննիչ դատարանում գործում է միայն այնքանով, որքանով դատարանի կողմից նման լիազորության կիրառումը բարենպաստ հետևանքներ է առաջացնում մեղադրյալի համար: Հակառակ կարգավորումը, որի դեպքում վերաքննիչ դատարանը կօժտվեր նման լիազորությամբ՝ անկախ մեղադրյալի շահերից, կհակասի «սահմանափակ վերաքննության» մոդելին և կնպաստի հանրային ու մասնավոր շահերի անհամաչափ գերակայությանը մեկը մյուսի հանդեպ: Հետևաբար, Նախագիծով սահմանված կարգավորումը լիովին իրավաչափ է²:

Ընդ որում, վերաքննիչ քրեական դատարանի իրավակիրառ պրակտիկայում եղել են դեպքեր, երբ վերաքննիչ դատարանը, գործող օրենսգրքի համաձայն կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի սահմաններով, ի շահ մեղադրյալի դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմնավորումների շրջանակից և դատական ակտով փոխել է արարքի իրավաբանական որակումը, ինչը նույնպես փաստում է Նախագիծում արվող կարգավորման օբյեկտիվ անհրաժեշտությունը:

Այսպես, Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 25.04.2008թ.

¹ Տե՛ս ԵԿԴ/0211/01/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.07.2011թ. որոշում:

² Տե՛ս Ռ. Մելիքյան, Տ. Սուլջան, նշվ. աշխ., էջ 407-րդ:

դատավճռով Ե. Հարությունյանին մեղավոր է ճանաչել 375-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարման համար¹: Այս դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Ե. Հարությունյանի պաշտպանը՝ նշելով, որ նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցագործությանը և Ե. Հարությունյանի անձին՝ խնդրելով փոխել 25.04.2008 թ. դատավճիռը և Ե. Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

Սակայն վերաքննիչ քրեական դատարանը գտել է, որ եղգար Հարությունյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը բացակայում է, և մեղադրյալին մեղսագրված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասից վերաորակել է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով:

Այսպիսով, վերաքննիչ դատարանին հնարավորություն տալով, անկախ վերաքննիչ բողոքի սահմաններից, փոխել արարքի իրավաբանական գնահատականը՝ Նախագիծը սահմանափակ վերաքննության պայմաններում արդարացիորեն հավասարակշռել է հանրային և մասնավոր շահերը:

Վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալին վերագրվող արարքը փոխելու լիազորությունները սահմանված են Նախագծի 380-րդ հոդվածում, որի 2-րդ մասի համաձայն՝ պարզելով, որ մեղադրյալի արարքի իրավական գնահատականը ճիշտ չէ խիստ լինելու պատճառով՝ վերաքննիչ դատարանը փոխում է դատական ակտը՝ հանցագործությանը տալով մեղադրյալի համար ավելի բարենպաստ իրավական գնահատական:

Նախագծի 380-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարզելով, որ մեղադրյալի արարքի իրավական գնահատականը ճիշտ չէ՝ մեղմ լինելու պատճառով՝ վերաքննիչ դատարանը բեկանում է դատական ակտը՝ վարույթը փոխանցելով առաջին ատյանի դատարան նոր քննության: Եթե նախկինում վարույթը նույն հիմքով փոխանցված է եղել առաջին ատյանի դատարան, ապա վերաքննիչ դատարանն իրավասու է բեկանել դատական ակտը՝ կայացնելով նոր դատական ակտ:

Այսպիսով, Նախագիծը սահմանել է տարբեր դատավարական հետևանքներ՝ պայմանավորված սխալ իրավական գնահատականի խիստ կամ մեղմ լինելով: Եթե առաջին ատյանի դատարանի կիրառած իրավական գնահատականը ճիշտ չէ խիստ լինելու պատճառով, վերաքննիչ դատարանը փոխում է դատական ակտը՝ կայացնելով նոր դատական ակտ: Եթե իրավական գնահատականը ճիշտ չէ մեղմ լինելու պատճառով, վերաքննիչ դատարանը բեկանում է դատական ակտը՝ գործն ուղարկելով առաջին ատյանի դատարան նոր քննության:

Միաժամանակ փորձելով կանխել գործը պարբերաբար ստորադաս դատարան վերադարձնելու և նրա կայացրած դատական ակտերը բողոքարկելու անվերջանալի շղթան՝ Նախագիծը սահմանել է, որ եթե նույն գործով նախկինում դատական ակտը բեկանվել է իրավական գնահատականը խիստ լինելու հիմքով, ապա վերաքննիչ դատարանն իրավասու է կայացնել նոր դատական ակտ:

Այսպիսով, ի համեմատ գործող օրենսգրքով սահմանված կարգավորման, Նախագծով սահմանվել է երկու սկզբունքային նորություն՝

1. սահմանվել է վերաքննիչ դատարանի լիազորությունը՝ անկախ վերաքննիչ բողոքի հիմքերից, ի շահ մեղադրյալի՝ փոխելու մեղադրանքի իրավական կողմը,

2. տարբերակվել են վերաքննիչ դատարանի լիազորությունները՝ ըստ սխալ իրավաբանական գնահատականի խիստ կամ մեղմ լինելու:

Միանշանակորեն ընդունելով վերաքննիչ դատարանի լիազորությունը անկախ վերաքննիչ բողոքի հիմքերից, ի շահ մեղադրյալի՝ փոխելու մեղադրանքի իրավաբանական կողմը, կարծում ենք՝ վերաքննիչ դատարանի լիազորությունների տարբերա-

¹ Տե՛ս ՇՂ/0038/01/08 քրեական գործով 25.04.2008 թվականին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը:

կումը ըստ սխալ իրավական գնահատականի խիստ կամ մեղմ լինելու որևէ կերպ արդարացված չէ:

Հնարավոր են դեպքեր, երբ առաջին ատյանի դատարանի տված իրավաբանական գնահատականի համեմատ վերաքննիչ դատարանի գնահատականը ո՛չ խիստ է, ո՛չ էլ մեղմ: Դա հնարավոր է երկու դեպքում՝

1. քրեական օրենսգրքի երկու տարբեր հոդվածների սանկցիաները միևնույն են, և դրանցից որևէ մեկը չի կարող մյուսի հանդեպ ավելի խիստ կամ ավելի մեղմ համարվել: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածը (խարդախություն) և ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածը (յուրացնելը կամ վատնելը):

2. իրավական գնահատականի փոփոխության արդյունքում արարքի իրավաբանական որակումը մնում է նույնը, սակայն փոխվում են հանցակազմի դիսպոզիցիաների հատկանիշները, որոնք ունեն քրեաիրավական նշանակություն: Օրինակ՝ անձը առաջին ատյանի դատարանի կողմից ճանաչվել է մեղավոր բռնությամբ զուգորդված բռնաբարության կատարելու համար, իսկ վերաքննիչ դատարանը, փաստելով հանցագործություն կատարելու փաստը, գտել է, որ անձը նշված հանցագործությունը կատարել է ոչ թե բռնությամբ, այլ տուժողի անօգնական վիճակից օգտվելով:

Հետևաբար, վերաքննիչ դատարանի լիազորությունների տարբերակումը, ըստ սխալ իրավական գնահատականի խիստ կամ մեղմ լինելու սպառիչ չէ, քանի որ չի ներառում իրավաբանական գնահատականի սխալ լինելու բոլոր դեպքերը:

Նախագծով առաջարկվող կարգավորման հիմնական թերությունն այն է, որ դրանով նախատեսված մեխանիզմի պարագայում մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի երաշխավորվում: Այսպես, Եվրոպական դատարանի կարծիքով ներկայացված մեղադրանքի և հետևաբար դատարանի կողմից դրա հնարավոր իրավաբանական որակման մասին մեղադրյալի ճշգրիտ և լրիվ տեղեկացումը քրեական դատավարությունում արդար դատաքննության էական նախապայման է¹:

Այս առումով անհրաժեշտ է անդրադառնալ Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկային և մանրամասն վերլուծել Մատեին ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի կայացրած որոշումը, որում լիովին արտահայտվել են վերջինիս դիրքորոշումները վերաքննիչ դատարանի կողմից մեղադրանքի իրավական գնահատականը փոխելիս ամբաստանյալի պաշտպանության իրավունքի խախտման վերաբերյալ: Նշված գործով Մատեին 2000 թ. մարտին առաջին ատյանի դատարանի կողմից դատապարտվում է չորս տարվա ազատազրկման՝ ահաբեկչական գործողություններ կատարելու և ահաբեկչական գործունեություն իրականացնելու հետ կապված շորթման փորձ իրականացնելու համար:

Նշված դատական ակտը բողոքարկվում է վերաքննիչ դատարան, որը Մատեիի գործողությունները վերաորակում է որպես շորթման փորձի դրդչություն և օժանդակություն, ահաբեկչական գործողություններ իրականացնելու նպատակով կազմակերպված դատավաղորդյանը մասնակցելու սադրանք՝ նրան դատապարտելով երեք տարվա ազատազրկման: Այնուհետև Մատեին նշված դատական ակտը բողոքարկում է վճռաբեկ դատարան՝ նշելով, որ արարքի վերաորակման արդյունքում խախտվել է իր պաշտպանության իրավունքը: Մերժում ստանալուց հետո բողոքարկում է Եվրոպական դատարան:

Եվրոպական դատարանը, պարզելու համար, թե արդյոք նշված գործով խախտվել է դիմումատուի՝ Մատեի պաշտպանության իրավունքը, նշում է, որ թեև առաջին ատյանի դատարանի դատական ակտի մեջ քննարկվել են Մատեի գործողությունները որպես սադրանք և շորթման փորձի դրդչություն և օժանդակություն որակելու հնարավորությունները, սակայն գործի քննության ընթացքում դրդչությանը և օժանդակությանը քրեաիրավական որևէ գնահատական չի տրվել: Հետևաբար՝ որևէ կերպ հնարա-

¹ Պելիսյան և Սասին ընդդեմ Ֆրանսիայի գործով 25.04.1999թ. Եվրոպական դատարանի N25444/94 որոշումը:

վոր չէ հաստատված համարել, թե Մաստին կարող էր գիտակցել իր գործողությունների սադրանք և հանցակցություն որակելու հնարավորությունը:

Դրանից հետո Եվրոպական դատարանը նշել է, որ տրամաբանական կլիներ ենթադրել, որ սկզբնական մեղադրանքի համեմատ դիմումատուի պաշտպանության մարտավարությունը փոխված մեղադրանքով այլ կլիներ: Այսինքն՝ չի կարելի պնդել, որ վերադրակումը դատավճռի վրա որևէ ազդեցություն չի ունեցել, քանի որ կարելի է միայն ենթադրել, թե ինչ դատավճիռ կկայացվեր այն դեպքում, եթե դիմումատուն հնարավորություն ունենար նախապատրաստելու իր պաշտպանությունը փոխված մեղադրանքով:

Ըստ Եվրոպական դատարանի՝ վերաքննիչ դատարանի կայացրած դատավճիռն իսկապես ավելի մեղմ էր, քան առաջին ատյանի դատավճիռը, սակայն Եվրոպական դատարանն ընդգծել է, որ միջամտություն է տեղի ունեցել դիմումատուի՝ իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքերի վերաբերյալ մանրամասն տեղեկացված լինելու և պաշտպանությունը նախապատրաստելու համար բավանականաչափ ժամանակ և հնարավորություն ունենալու իրավունքի մեջ: Ընդ որում, մեղադրանքի բնույթի և հիմքերի վերաբերյալ մանրամասն տեղեկացված լինելը ներառում է տեղեկացված լինելը ինչպես վերագրվող փաստական հանգամանքներին, այնպես էլ դրանց իրավաբանական գնահատականին:

Այսինքն, նշված գործով Եվրոպական դատարանը փաստել է մեղադրանքի փոփոխության արդյունքում ամբաստանյալի պաշտպանության իրավունքի խախտման մասին, որը, սակայն, տեղի է ունեցել ոչ թե մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների փոփոխության կամ լրացման հետևանքով, այլ նրա արդյունքում, որ փոխված մեղադրանքի դեպքում պաշտպանության կողմի տակտիկան, մարտավարությունն այլ կլիներ:

Հետևաբար, մեղադրյալի պաշտպանության իրավունքը խախտվում է այն դեպքերում, երբ միևնույն փաստական հանգամանքների շրջանակներում դատարանի կողմից փոխվում է արարքի իրավաբանական որակումը, և մեղադրյալը չի ունենում հնարավորություն՝ պաշտպանվելու փոփոխված մեղադրանքից:

Եվրոպական դատարանն իր այդ դիրքորոշումը վերահաստատել է Սադակը և այլք ընդդեմ Թուրքիայի գործով, որով ամբաստանյալները մեղադրվում էին պետական ամբողջականությանը վնաս պատճառելու մեջ և անջատողական քարոզչության իրականացնելու համար, սակայն դատավճռի հրապարակման օրը դատարանը նրանց առաջարկել է պատրաստվել մի նոր մեղադրանքի, այն է՝ անօրինական զինված խմբավորման պատկանելու համար:

Դատարանը միաժամանակ մերժել է նոր մեղադրանքի դեմ պաշտպանությունը նախապատրաստելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու մասին դիմողների միջնորդությունները, որոնք պնդում էին, որ իրենք հնարավորություն չեն ունեցել համարժեքորեն պաշտպանվելու նոր մեղադրանքից և ներկայացնելու նոր ապացույցներ:

Սակայն Թուրքիայի իշխանությունները պնդում էին, որ դատարանին չի կարելի քննադատել քրեական հետապնդման որակումը փոխելու համար, քանի որ վերջինս տվյալ դեպքում ընտրել է փաստերի որակման ավելի նվազ խիստ տարբերակը, քան այն, որ սկզբնապես ներկայացված էր մեղադրանքի մեջ. սկզբնական մեղադրանքի համար նախատեսված էր մահապատիժ, իսկ դատարանի կողմից փոփոխված մեղադրանքի համար՝ ազատազրկում:

Եվրոպական դատարանը նշել է, որ դատախազության կողմից ներկայացված մեղադրանքում ամբաստանյալները մեղադրվում էին միայն պետության աբողջականությանը սպառնացող դավաճանության համար: Չնայած մեղադրանքում հիշատակվում էին դիմողների կապերը ահաբեկչական կազմակերպության հետ, Եվրոպական դատարանը նշել է, որ գործի նախորդ քննության ընթացքում այդ կապերը որակվել են որպես սզբնական մեղադրանքի հիմքում ընկած փաստերի բացահայտման միջոց:

Եվրոպական դատարանը, վերլուծելով սկզբնական մեղադրանքով հանցակազմը

(պետական ամբողջականությանը սպառնալը) և դատարանի կողմից փոփոխված մեղադրանքով հանցակազմը (անօրինական զինված կազմակերպության պատկանելը), նշել է, որ դրանցից ոչ մեկը մյուսի օրգանական տարր չէ: Այսպիսով, Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ փաստերի որակումը փոփոխելու իր անքակտելի իրավունքն օգտագործելիս թուրքիայի դատարանը պարտավոր էր պաշտպանության կողմին տրամադրել բավարար ժամանակ՝ նոր մեղադրանքի դեմ արդյունավետ պաշտպանությանը նախապատրաստվելու համար:

Ուստի Եվրոպական դատարանը նշել է, որ դիմողները բավարար չափով հնարավորություն չեն ունեցել կանխատեսելու, որ պետության ամբողջականությանը սպառնացող դավաճանության կապակցությամբ ներկայացված սկզբնական մեղադրանքը կարող է փոխվել մեկ այլ մեղադրանքով, այն է՝ պետության ամբողջականությանը սպառնացող զինված կազմավորմանը անդամակցելու մեջ:

Եվրոպական դատարանը սույն գործով վերահաստատել է նախորդ որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ մեղադրյալի պաշտպանության իրավունքը խախտվում է այն դեպքերում, երբ միևնույն փաստական հանգամանքների շրջանակներում դատարանի կողմից փոխվում է արարքի իրավաբանական որակումը, և մեղադրյալը հնարավորություն չի ունենում պաշտպանվելու փոփոխված մեղադրանքից: Սակայն սույն գործով Եվրոպական դատարանը նշել է, որ նման խախտում հնարավոր է առկա համարել, եթե սկզբնական մեղադրանքով և փոփոխված մեղադրանքով փոփոխված հանցակազմերը օրգանապես տարբեր են, այսինքն՝ երբ փոփոխված մեղադրանքը սկզբնական մեղադրանքի մաս չի կազմում:

Եվրոպական դատարանը նույնանման իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Մատոչն ընդդեմ Իտալիայի գործով¹: Այս որոշման հիման վրա կարելի է եզրակացնել, որ դատարանի կողմից միևնույն փաստական հանգամանքների շրջանակներում մեղադրանքի իրավական կողմը փոխելու դեպքում անձի պաշտպանության իրավունքը խախտվում է, եթե

1) մեղադրյալը չի կանխատեսում դատարանի կողմից մեղադրանքի իրավական գնահատականի նման փոփոխման հնարավորությունը,

2) մեղադրյալը չի կարողանում ժամանակին և արդյունավետորեն արձագանքել դրան՝ անհրաժեշտության դեպքում փոխելով իր պաշտպանական մարտավարությունը:

Այսպիսով, մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտումը հնարավոր է ոչ միայն այն դեպքերում, երբ փոխվում են մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքները, այլ նաև այն դեպքերում, երբ փոխվում է արարքի իրավաբանական որակումը:

Մեղադրյալի պաշտպանության իրավունքի անթույլատրելիությունը չի պահպանվում այն դեպքերում, երբ իրավական հանգամանքների փոփոխության դեպքում մեղադրյալը զրկվում է քրեադատավական օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից²: Հետևաբար՝ նախագծով նախատեսված կարգավորման դեպքում մեղադրյալի պաշտպանության իրավունքը խոցելի է:

Օրինակ՝ առաջին ատյանի դատարանը մեղադրյալին մեղավոր է ճանաչում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածով նախատեսված հանցանքում և դատապարտում ազատազրկման 2-րդ տարի ժամկետով: Նշված դատավճռի դեմ մեղադրյալի պաշտպանը բերում է վերաքննիչ բողոք՝ պատճառաբանելով, որ դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում մեղադրյալի կատարած հանցանքի ծանրությանը և նրա անձին:

Վերաքննիչ քրեական դատարանը դատարանը, ղեկավարվելով նախագծով ի-

¹ Մատոչն ընդդեմ Իտալիայի 25.07.2000 թ. Եվրոպական դատարանի N23969/94 որոշում:

² St'u **Бравилова Е.А.** Пределы судебного разбирательства: дис. канд. юрид. наук, Екатеринбург, 2004. էջ 139:

րեն վերապահված լիազորություններով, դուրս է գալիս վերաքննիչ բողոքի սահմաններից՝ հայտնաբերելով, որ մեղադրյալի արարքին տրվել է սխալ իրավական գնահատական: Ըստ վերաքննիչ քրեական դատարանի՝ մեղադրյալի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը բացակայում է, փոխարենն առկա է 177-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը, որն ավելի մեղմ է:

Դատարանը, ի շահ մեղադրյալի, վերաքննիչ բողոքի սահմաններից դուրս գալու իր լիազորությունը կիրառելով, բեկանում է նշված դատական ակտն ու անձին մեղավոր է ճանաչում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու համար: Սակայն օրենսգրքի 177-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը վարույթի որևէ փուլում քննարկման առարկա չի եղել:

Հետևաբար՝ վերաքննիչ դատարանի կողմից արարքի իրավաբանական որակումը փոխելու դեպքում մեղադրյալի պաշտպանության իրավունքը խախտվում է, քանի որ վերջինս կարող է պնդել, որ չէր կարող կանխատեսել մեղադրանքի նման փոփոխություն կամ վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում չի ունեցել անհրաժեշտ միջոցներ՝ արձագանքելու մեղադրանքի փոփոխությանը:

Այսպես, ի համեմատ առաջին ատյանի դատարանի կողմից նույն լիազորության իրականացման՝ Նախագծով սահմանված չէ վերաքննիչ դատարանում տարբերվող իրավական գնահատականի հարցը քննարկելու կարգ: Այսինքն՝ եթե առաջին ատյանի դատարանը մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը փոխելու դեպքում պարտավոր է դատավարության կողմերի հետ քննարկել օրենքի կիրառման կամ մեկնաբանման հարցը, վերաքննիչ դատարանը՝ նման լիազորությամբ օժտված չէ:

Ինչպես արդեն նշվեց, սույն կանոնի կիրառումն ապահովելու համար Նախագիծը որպես քրեադատավարական օրենքի էական խախտում և դատական ակտի բեկանման պարտադիր հիմք է սահմանել առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրանքի իրավաբանական կողմը փոխելը՝ առանց այդ հարցը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում կողմերի համար քննարկման առարկա դարձնելու: Փաստորեն նշված գործողությունն առաջին ատյանի դատարանի կողմից կատարելն արդարացիորեն որակվում է քրեադատավարական օրենքի էական խախտում, իսկ վերաքննիչ դատարանի կողմից նման խախտում կատարելը որևէ դատավարական հետևանք չի առաջացնում:

Հետևաբար՝ որոշ դեպքերում, երբ մեղադրյալի արարքի իրավական գնահատականը ճիշտ չէ խիստ լինելու պատճառով, և վերաքննիչ դատարանը փոխում է դատական ակտը՝ հանցագործությանը տալով մեղադրյալի համար ավելի բարենպաստ իրավական գնահատական, և գործը չի ուղարկում նոր քննության, մեղադրյալի պաշտպանության իրավունքը խախտվում է:

Փոխարենը հնարավոր են իրավիճակներ, երբ վերաքննիչ դատարանը կողմից մեղադրյալի արարքին վերագրվող իրավական գնահատականը փոխվում է խստացման առումով, սակայն դրա արդյունքում մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի խախտվում:

Այսպես, մեղադրյալ Ա-ին առաջադրված է մեղադրանք ծանրացնող հանգամանքներում կատարված սպանության համար: Առաջին ատյանի դատարանը, դատավարության կողմերի հետ քննարկելով տարբերվող իրավական գնահատականի հարցը, Ա-ին առաջադրված մեղադրանքը վերադարձնում է հասարակական սպանության: Վերաքննիչ դատարանը տուժողի ներկայացրած բողոքի հիման վրա գտնում է, որ առաջին ատյանի դատարանի կողմից տրված իրավական գնահատականը սխալ է, և ա-

րարքը վերաորակում է ծանրացնող հանգամանքներով կատարված սպանություն:

Նշված դեպքում, հիմք ընդունելով Եվրոպական դատարանի որոշումների մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում ենք, որ մեղադրյալի պաշտպանության իրավունքը որևէ կերպ չի խախտվում, քանի որ գործի նախորդ առաջին ատյանի դատարանում քննության ընթացքում մեղադրյալն ունեցել է բավարար ժամանակ և հնարավորություն պաշտպանվելու նշված մեղադրանքից, իսկ այն հանգամանքը, որ տուժողը վերաքննիչ բողոքով պահանջել էր հասարակ սպանությունը վերաորակել ծանրացնող հանգամանքներում կատարված սպանության, նշանակում է, որ մեղադրյալը կանխատեսել է մեղադրանքը փոխելու հնարավորությունը:

Ելնելով նախագծի 380-րդ հոդվածի 3-րդ մասից՝ վերաքննիչ դատարանը նշված դեպքում գործը պետք է ուղարկի նոր քննության: Սակայն նման պարագայում գործն առաջին ատյանի դատարան ուղարկելն արդարացված չէ:

Քանի որ դատարանն ունի անհրաժեշտ լիազորություններ և հնարավորություններ, նա ինքը պարտավոր է լուծել գործը՝ պատասխանատվությունը չդնելով ստորադաս դատարանի վրա¹: Ըստ Ն. Ն. Կովտունի՝ վճռաբեկության համեմատ վերաքննության սկզբունքային և անօտարելի առավելություններից մեկն այն է, որ վերջինս ոչ միայն իրավունք ունի, այլ նաև պարտավոր է ուղղել դատական սխալներն ու բողոքարկվող դատական ակտի անձշտությունները՝ կայացնելով նոր դատական ակտ, որն ամբողջությամբ փոխարինում է նորին: Վերաքննիչ դատարանի այս իրավասությունը սկզբունքային է և կարևոր, քանի որ հնարավորություն է տալիս վերադաս դատարանում՝ դատական ատյանում, վերացնել անձի իրավունքների և օրինական շահերի խախտումները՝ առանց գործն առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու²:

Նշված տեսական դրույթն ամրագրվել է Նախագծի 376-րդ հոդվածի 4-րդ մասում, որի համաձայն՝ դատական ակտը բեկանելիս վերաքննիչ դատարանն իրավասու է վարույթը փոխանցել առաջին ատյանի դատարան միայն այն դեպքում, երբ սույն օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունները և հնարավորությունները բավարար չեն իր կողմից կայացվելիք նոր դատական ակտի արդարացիությունն ապահովելու համար:

Ելնելով վերոշարադրյալից՝ նշված դեպքում վերաքննիչ դատարանը պետք է իրավասություն ունենա կայացնելու նոր դատական ակտ:

Ուստի կարծում ենք՝ տարբեր դատավարական հետևանքներ նախատեսելիս սխալ իրավական գնահատականի խիստ կամ մեղմ լինելը որպես չափանիշ սահմանելն արդարացված չէ: Որպես համապատասխան չափանիշ պետք է հանդես գա ոչ թե սխալ իրավաբանական գնահատականի մեղմ կամ ծանր լինելը, այլ ամբաստանյալի պաշտպանության իրավունքն ապահովելու անհրաժեշտությունը:

Այսինքն՝ եթե մեղադրյալը կանխատեսել էր իրավական գնահատականի փոփոխությունը, հնարավորություն էր ունեցել պաշտպանվելու դրանից, ապա նման դեպքում վերաքննիչ դատարանը պետք է իրավասություն ունենա կայացնելու նոր դատական ակտ: Հակառակ պարագայում գործը պետք է ուղարկվի նոր քննության:

¹ Տե՛ս **Головко Л. В.**, Новеллы УПК РФ: прогресс или институциональный хаос?/ Апелляция, кассация, надзор: новеллы ГПК РФ и УПК РФ. Первый опыт критического осмысления: Москва, 2011, էջ 54:

² **Ковтун Н.Н.** Апелляция, кассация, надзор: анализ содержания/ Апелляция, кассация, надзор: новеллы ГПК РФ и УПК РФ. Первый опыт критического осмысления: -Юрист: Москва. 2011, էջ 86:

Հետևաբար՝ առաջարկվում է նախագծի 380-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Պարզելով, որ մեղադրյալի արարքի իրավական գնահատականը ճիշտ չէ՝ վերաքննիչ դատարանը բեկանում է դատական ակտը՝ վարույթը փոխանցելով առաջին ատյանի դատարան նոր քննության, բացառությամբ այն դեպքերի, երբ վերաքննիչ դատարանի կողմից կիրառվող իրավական գնահատականը համընկնում է առաջին ատյանի դատարանում դատախազի պաշտպանած մեղադրանքի իրավական գնահատականի հետ, կամ այն առաջին ատյանի դատարանում կողմերի հետ քննարկվել է սույն օրենսգրքի 344-րդ հոդվածով կամ 349-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, կամ այն ներառվում է առաջին ատյանի դատարանի վերոփկտով նախատեսված իրավական գնահականի սահմաններում»: Նշված դեպքերից որևէ մեկի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը փոփոխում է դատական ակտը՝ հանցագործությանը տալով նոր իրավական գնահատական:

Այսինքն՝ իրավական գնահատականի սխալ լինելու դեպքում ընդհանուր կանոնն այն է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը բեկանելիս պետք է գործն ուղարկի առաջին ատյանի դատարան նոր քննության: Նշված կանոնից հարկավոր է սահմանել երեք բացառություն:

Առաջին. վերաքննիչ դատարանը պետք է իրավասություն ունենա փոխելու արարքի իրավաբանական գնահատականը՝ առանց գործը նոր քննության ուղարկելու, եթե վերաքննիչ դատարանի կողմից կիրառվող իրավական գնահատականը համընկնում է առաջին ատյանի դատարանում ներկայացված մեղադրանքի իրավական գնահատականի հետ: Օրինակ՝ առաջին ատյանի դատարանում Ա-ն մեղադրվում է սպանություն կատարելու համար, սակայն դատարանի կողմից օրենսգրքի պահանջների պահպանմամբ մեղադրյալին վերագրվող արարքը դատավճռով փոխվում է անզուլությամբ մահ պատճառելու համար կատարված հացագործությամբ:

Նշված մեղադրանքի դեմ վերաքննիչ բողոքը բերում է դատախազը կամ տուժողը՝ նշելով, որ այդ փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածը, և դատարանը թույլ է տվել նյութական նորմի խախտում:

Ելնելով այն հանգամանքից, որ մեղադրյալը առաջին ատյանի դատարանում քննության ընթացքում արդեն իսկ պաշտպանվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով նախատեսված մեղադրանքի դեմ, վերաքննիչ բողոքը բավարարումը և մեղադրանքի փոփոխությունը որևէ կերպ չեն խախտում մեղադրյալի պաշտպանության իրավունքը:

Երկրորդ. վերաքննիչ դատարանը պետք է իրավասություն ունենա փոխելու արարքի իրավաբանական գնահատականը՝ առանց գործը նոր քննության ուղարկելու, եթե վերաքննիչ դատարանի կողմից կիրառվող իրավական գնահատականը առաջին ատյանի դատարանում կողմերի հետ քննարկվել է Նախագծի 344-րդ հոդվածով կամ 349-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

Կրկին բերենք համապատասխան օրինակը: Առաջին ատյանի դատարանում Ա-ն մեղադրվում է սպանություն կատարելու համար: Դատարանը եզրափակիչ ելույթի վերջում տարբերվող իրավաբանական գնահատականի համար սահմանված կարգով կողմերի հետ քննարկում է մեղադրյալին վերագրվող արարքը որպես անզուլությամբ մահ պատճառել որակելու հնարավորությունը:

Սակայն անձը դատավճռով մեղավոր է ճանաչվում սպանություն կատարելու համար: Նշված մեղադրանքի դեմ բողոքը բերում է պաշտպանը՝ նշելով, որ նշանակված պատիժը չի հապատասխանությանը մեղադրյալի անձին: Վերաքննիչ դատարանը,

դուրս գալով վերաքննիչ բողոքի սահմաններից, արարքի իրավաբանական գնահատականը կարող է փոխել ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածով:

Տվյալ դեպքում մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի խախտվում, քանի որ վարույթի շրջանակներում մեղադրյալը հնարավորություն ունեցել է պաշտպանվելու նշված մեղադրանքից:

Երրորդը դեպքը վերաբերում է այսպես կոչված կլանման սկզբունքին, երբ հանցակազմի որակյալ հատկանիշներ պարունակող մեղադրանքը ներառում է հասարակ («նոմինալ») մեղադրանքը, և այդօրինակ, ինչպես նաև պատիժը ժանրացնող և բացասական այլ հանգամանքների բացառումը մեղադրանքից չի խախտում մեղադրյալի պաշտպանության իրավունքը կամ կասկածի տակ չի դնում դատարանի կողմից անմեղության կանխավարկածի պահպանումը: Նշված դեպքերում վերաքննիչ դատարանը պետք է օժտված լինի մեղադրանքի իրավաբանական գնահատականը փոխելու լիազորությամբ, քանի որ մեղադրյալի պաշտպանության իրավունքը նույնպես չի խախտվում:

Այսպիսով, նշված երեք դեպքերում վերաքննիչ դատարանը պետք է իրավասություն ունենա բեկանելու առաջին ատյանի դատարանի դատական ակտը և կայացնելու նոր դատական ակտ՝ փոխելով մեղադրյալի արարքի իրավաբանական գնահատականը: Մնացած դեպքում գործը պետք է ուղղակի նոր քննության:

ИЗМЕНЕНИЯ СУДОМ АПЕЛЛЯЦИОННОЙ ИНСТАНЦИИ КВАЛИФИКАЦИИ ОБВИНЕНИЕ, КОТОРАЯ ПРЕДУСМОТРЕНО ПРОЕКТОМ НОВОГО УГОЛОВНО- ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Айк Саргсян

*Аспирант кафедры уголовного
процесса и криминалистики ЕГУ*

В статье автор исследует вопросы, касающиеся изменения судом апелляционной инстанции квалификаций обвинения, что предусмотрено проектом нового Уголовно-процессуального кодекса Республики Армения.

Автор обсудил существенные изменения, которые были сделаны в проекте по сравнению с действующим Уголовно-процессуальном кодексом Республики Армения. Автор изучил право апелляционного суда применять новое решение, когда юридическая квалификация уголовного обвинения неправильное. Автор критикует регулирование, предусмотренное в проекте, относительно праве суда апелляционной инстанции отменять решение суда первой инстанции и вынести новое в любом случае, когда приговор апелляционного суда считается более мягким.

Основываясь на регулированиях Европейского суда, автор предложил механизмы относительно дифференцирования случаев, когда апелляционный суд имеет право отменить решение суда первой инстанции и вынести новое решение, и когда после аннулирования решения уголовное дело должно быть направлено в суд первой инстанции.

ISSUES CONCERNING CHANGING THE CRIMINAL INDICTMENT BY THE APPELLATE COURT WHICH IS PROVIDED BY THE DRAFT OF THE CRIMINAL PROCEDURE CODE OF THE REPUBLIC ARMENIA

Hayk Sargsyan

*PhD student of the YSU Chair of Criminal
Procedure and Criminalistics*

In the article the author has discussed and explored issues concerning changing the criminal indictment by the appellate court which is provided by the draft the Criminal Procedure Code of the Republic of Armenia.

The author has discussed the essential changes which have been made in the draft in comparison with the current Criminal Procedure Code of the Republic of Armenia. The author has studied the power of appellate court to render new judgment when the legal qualification of criminal indictment is wrong. The author criticizes the regulation of the draft concerning the right of the appellate court to revoke the decision of court of first instance and to render new one in any case when the verdict of appellate court is lighter.

Due to the regulation of the European Court, the author has suggested mechanisms to differentiate cases when the appellate court has a power to revoke the decision of the court of the first instance and render a new decision, and when after revoking the decision of the appellate court the criminal case should be sent to the court of first instance.

Բանալի բառեր՝ վերաքննիչ դատարան, մեղադրանքի իրավաբանական գնահատական, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովում, գործը նոր քննության ուղարկել, բեկանելի դատական ակտը, Եվրոպական դատարան, կլանման սկզբունք:

Key words: *Appellate court, the legal qualification of the criminal indictment, the right to defend of the accused person, sending case to new hearings, revoking judicial act, European court, the principle of absorption.*

Ключевые слова: *апелляционный суд, правовая квалификация уголовного обвинения, право на защиту обвиняемого, направление уголовного дела в суд первой инстанции, отмена судебного акта, Европейский суд, принцип поглощения.*